«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **ԽՈՍՔ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ՀԵՂԻՆԱԿ **ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ **ԴԱՍՎԱՐ**

ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք և հաղորդակցության ժամերը մայրենիի դասընթացում

Ներածություն----------3

Գլուխ 1. Խոսքը և խոսքի զարգացումը

1.1 Խոսքի տեսակները եւ բաղադրիչները----------5

1.2. Խոսքի զարգացումը եւ ուսուցման միջոցները----------10

Գլուխ 2. Հաղորդակցությունը եւ հաղորդակցական կարողությունների զարգացումը

2.1 Հաղորդկացության դերը եւ տեսակները----------15

2.2 Հաղորդակցական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում-
----------17

Եզրակացություն----------21

Գրականության ցանկ

Ներածություն

Թեմայի արդիականությունը՝

Դպրոցում ուսուցչի եւ աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարեւորագույն խնդիրներն են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշում կայացնելու, կարողությունների ձեւավորումն ու զարգացումը: Գիտելիքների գումարի յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների: Հասարակական կյանքի տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում դպրոցը նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Աշակերտը գիտելիքներ մտապահողից վերաարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սյուբեկտի՝ որտեղ իհարկե առաջնային տեղը տրվում է ուսուցչին, ով իր վրա է վերցնում երեխայի մոտ հաղորդակցական եւ խոսքի զարգացման դերը:

Թեմայի արդիականությունը- հիմված է խոսքի եւ հաղորդակցության ադեկվատ զարգացման անհրաժեշտության բացայատման եւ շեշտադրման վրա:

Աշխատանքի նպատակն է զարգացնել մայրենիի դասընթացում խոսքի եւ հաղորդակցության դերը եւ նշանակությունը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետեւյալ **խնդիրները՝**

- Կատարել խոսքի եւ դրա տեսակների ուսումնասիրություն եւ բացահայտում
- Գործնական առումով վերհանել այն միջոցները եւ մեխանիզմները, որոնք կնպաստեն խոսքի զարգացման

- Դիտարկել հաղորդակցության տեսակները եւ նշանակությունը
- Ներկայացնել հաղորդակցական կարողությունների զարգաման հիմական միջոցները
- Արժեւորել խոսքի եւ հաղորդակցության նշանակությունը մայրենիի դասընթացում
- Աշխատանքի կառուցվածքը-աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլխից, որոնցից յուրաքանչյուրը 2 ենթագլխից, եզրակացությունից եւ գրականության ցանկից:
- Աշխատանքի օբյեկտը եւ առարկան-աշխատանքի օբյեկտը խոսքի եւ հաղորդակցության ուսումնասիրությունն է՝ որպես տեսական դոկտրիններ, իսկ առարկան գործնական առումով վերջիններիս զարգացման համար անհրաժեշտ մեխանիզմների եւ միջոցների վերհանումը:

Գլուխ 1 Խոսքը եւ խոսքի զարգացումը

Գլուխ 1.1 Խոսքի տեսակները եւ բաղադրիչները

Մայրենի լեզվի ուսուցման հիմնահարցը բոլոր ժամանակներում էլ արդիական հնչեղություն է ունեցել: Իրենց հրապարակումներում այդ հարցին անդրադարձել են անցյալի հայ մեթոդիստներից շատերը:

Ըստ Մանդինյանի՝ երեխային լեզվական առաջին կարողություններն ու աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունները տրվում են լեզվի ուսուցման բնական ճանապարհով, այսինքն խոսելու եւ լսելու միջոցով[1]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ տվյալ ժողովրդի գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը: Մարդու ներդաշնակ զարգացման գործում իր անգնահատելի տեղն ունի հստակ, դիպուկ եւ մատչելի խոսքը: Կապակցված խոսքի ուսուցումը, հատկապես տարրական դպրոցում, աշակերտի հոգեւոր, մտածական ոլորտներից չի առանձնանում: Այլ կերպ ասած տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգեւոր եւ ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի եւ աշխատանքային նախնական հմտությունների ձեւավորումն է[2]: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ եւ միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Բանավոր խոսքը մարդու մտավոր կարողությունների կարեւոր դրսեւորումներից է: Բանավոր խոսքի զարգացումը տեղի է ունենում մարդու ամբողջ կյանքի ընթացքում՝ իր վրա կրելով հասարակության ընդհանուր զարգացածության ամբողջական կնիքը: Բանավոր խոսքի անընդհատ մշակումը պարտադիր, անընդհատ եւ հետեւողական

---

[11] http://kantegh.asj-oa.am/645/1/221-224.pdf, Ռ. Խարազյան Մայրենի լեզվի ուսուցման պատմությունից Կանթեղ Գիտական հոդվածների ժողովածու, Երեւան 2005, էջ 221-224.,

[2] Թ. Ալեքսանյան, Լեզվի ուսուցումը միջին դպրոցում, Էդիտ Պրինտ, Երեւան, 2012, էջ 221

գործընթաց է[3]: Խոսքի մշակույթի ձեւավորման ուղղությամբ տարվող աշխատանքը զարգացնում է սովորողների կապակցված խոսք կազմելու կարողությունները, հաղթահարում է դասավանդման ընթացքում դրսեւորվող ձեւականությունը, օժանդակում է եւ նախադասությունների ձեւաբանական եւ կապակցված խոսքի մեջ բառերի շարահյուսական կապերի, հետեւաբար նաեւ լեզվի արտահայտչական եւ գործնական- կիրառական կողմի ընկալմանն ու զարգացմանը[4]:

Այսպիոսով խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան, երբեմն իր համար աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ, դարձվածքներ է սովորում: Այս ամենը հաշվի առնելով տարրական դասարանները պետք է դարձնել երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ՝ որպես բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան: Եվ ի վերջո ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որի հիմքում պետք է դրվի խոսքի մշակումը եւ զարգացումը:

Խոսքը, որպես մտքի եւ մտածողության դրսեւորման կատրայալ ձեւ, կարող է լինել 2 տեսակ՝ ներքին եւ արտաքին կամ չարտահայտված, այսինքն՝ հնչյունային ձեւ չընդունած, հնչյունային թաղանթ չստացած, մտային եւ արտահայտված՝ հնչյունային ձեւ ընդունած խոսք: Արտաքին կամ արտահայտված խոսքն էլ իր հերթին լինում է 2 տեսակ կամ ունենում է դրսեւորման ձեւ՝ բանավոր եւ գրավոր, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները[5]

Բանավոր կամ հնչյունային խոսքը մտածողության նյութական թաղանթն է ու աշխատանքի հետ միասին համարվում է մտածողության առաջացման նախապայմաններից մեկը եւ ծառայում որպես մարդկանց միջեւ հաղորդակցման

[3] http://notebook.mskh.am/arxiv/dpir3-2.htm, Բանավոր խոսքի զարգացումը, ծրագրային եւ մեթոդական դրույթներ
[4] http://kantegh.asj-oa.am/1862/1/230-237.pdf, Թ. Ալեքսանյան, Լեզվաբաղաբական նյութի ուսուցումը որպես կապակցված խոսք զարգացման միջոց
[5] Ա. Տ. Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս, Երեւան, 1980, էջ 404

հիմական միջոց։ Այս առումով գիրը կամ գրավոր խոսքը հնչյունային խոսքին օգնող, հաղորդակցման օժանդակ միջոց է, որը նպաստում է հնչյունային խոսքի վերատրադրմանն ու կայունացմանը[6]: Նմանատիպ դիտարկման թերեւս հիմք է հանդիսանում բանավոր խոսքի հետեւյալ 2 հիմական թերությունները կամ սահմանափակումները՝

- Սահմանափակությունը տարածության մեջ, քանզի հնչյունային խոսքը ընկալելի է միայն կարճ տարածության վրա
- Սահմանափակությունը ժամանակի մեջ, որովհետեւ հնչյունային խոսքը լսելի է միայն նրա արտաբերման պահին։

Ուստի դիտարկելով այս սահմանափակումները կարող ենք ասել, որ գրավոր խոսքը հնչյունային խոսքին օգնող օժանդակ միջոց է, որի հիմական խնդիրը հնչյունային խոսքը գրանցելը ՝ ժամանակի եւ տարածության մեջ կայունացնելն է։

Բանավոր կամ կապակցված խոսքը բաղկացած է 3 հիմական բաղադրամասերից՝[7]

- Բառապաշար
- Քերականություն
- Խոսք կառուցելու կարողություն

Բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարեւոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը, որովհետեւ «օբյեկտիվ իրականության առարկաներն եւ երեւույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով: Բառերը, իրենց հնչյունական կազմով եւ իմաստով, մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրեւ օբյեկտիվ իրականության առարկաների եւ երեւույթների փոխարինողներ։ Բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է, որ սկսվում է երեխայի կողմից շրջապատի աշխարհը ճանաչելու եւ գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ

[6] Ա. Տ. Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս, Երեւան, 1980, էջ 404
[7] Տես նույն տեղում, 412-415

օրից եւ շարունակվում է մինչը ընա կյանքի վերջը, որովհետեւ ճանաչումն ու ընկալումը տեղի են ունենում բառերի մեջ եւ բառերի միջոցով։

Բառապաշարի զարգացումը ամբողջություն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարկական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքային համակարգին։ Զարգացման մյուս ընդհանուր գործընթացն իրացվում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով եւ բառապաշարի կատարելագործումով[8]։

Բառապաշարի ուսուցման հարցում առաձնահատուկ տեղ է գրավում նրա տարբեր շերտերի գոյացումը եւ մեկի հաշվին մյուսի հարցտացումն ու ճոխացումը։ Հայտնի է, որ բառապաշարը լինում է 2 տեսակ՝ գործուն եւ ոչ գործուն կամ ակտիվ եւ պասիվ։ Պետք է նշել այն հանգամանքը, որ գրագետ մարդու բառապաշարի ոչ գործուն մասը ծավալով բավականին մեծ է, բայց այն աստիճանաբար վերածվում է գործուն բառապաշարի, որովհետեւ այս երկրորդը միշտ համալրվում ու հարսատնում է առաջինի հաշվին։ Սակայն պետք է նկատել, եր դպրոց գալուց առաջ երեխայի բառապաշարը հիմնականում միատարր է, բաղկացած է միայն գործուն բառերից, որոնք երեխան հիշում է, օգտագործում եւ հասկանում՝ չնայած երբեմն հանդիպում են նաեւ բառեր, հատկապես նոր սովորած բառեր, հատկապես նոր սովորած բառեր, որոնք նա օգտագործում է առանց դրանց իմաստը լրիվ հասկանալու։ Հետագայում՝ սովորելուն զուգընթաց, գոյանում է նաեւ բառապաշարի ոչ գործուն շերտը, բառեր, որոնք երեխան լսում կամ կարդում հասկանում է, սակայն իր խոսքի մեջ դրանք չի օգտագործում։ Բառապաշարի ոչ գործուն շերտը ծավալով մեծ չի լինում, սակայն այն աստիճանաբար համալրվում է նոր բառերով եւ ինքն էլ իր հերթին համալրում գործուն բառապարշարը։ Կապակցված խոսքի 2-րդ բաղադրիչը քերականությունն է։ Քերականությունը խոսքի

[8] http://ysu.am/files/03A_Hayrapetyan.pdf, Ա. Հայրապետյան, բառակերտությունը որպես լեզվի ստեղծագործական հատկանիշի իրացման միջոց, էջ 25

լեզվական ճշտության եւ տրամաբանական կառուցվածքի կմախքն է, այն ավելի ճիշտ եւ կատարյալ է դարձնում խոսքը Քերականության ուսուցումը բացառիկ կարեւոր նշանակություն ունի գործնականում խոսքի մեջ բնականորեն ճիշտ կիրառվող լեզվական ձեւերի՝ բառերի թեքման, համաձայնեցման, կապակցման, բառակապացությունների եւ նախադասությունների մեջ դրանց ճիշտ շարադասման համար: Ուստի այս առումով քերականության ուսուցումը տարրական դասարաններում առաջնային խնդիր է ուսուցչի համար՝ հիմքում ունենալով աշակերտին քերականական օրինաչափությունների օրենքների ուսուցումը:

Եվ կապացված խոսքի վերջին բաղադրիչը խոսք կառուցելու կարողությունն է: Խոսք կառուցելու կարողությամբ երեխաներն օժտված են դեռեւս դպրոց գալուց շատ առաջ, սակայն միշտ չէ, որ այդ կարողությունը իր դրսեւորման մեջ անթերի ու կատարյալ է լինում: Ուսուցչի հիմնական խնդիրներից մեկն էլ երեխաների մեջ այդ կարողության հետագա մշակումն ու կատարելագործումը պետք է լինի՝ այն հաշվով, որ այն վերածվի լեզվական հմտության: Խոսք կառուցելու վարժությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն կարդացածի բովանդակությունը փոփոխելով ստեղծագործորեն պատմելու հանձնարարությունները, նախադասությունների ձեւափոխումները, ձեւափոխված բնագրերի վերականգնումը, ազատ եւ հորինողական թելադրությունները, փոխադրություններն ու շարադրությունները:

Այսպիսով խոսք կառուցելու հմտությունը, փաստորեն, իր մեջ ամփոփում է բառապաշարի ու քերականության տարրերի համատեղ կիրառումը: Բառապաշարը տալիս է խոսքի շինանյութը, քերականությունը՝ կառուցման օրինաչափություններն ու կանոնները, իսկ խոսք կառուցելու կարողությունը այդ երկուսը միավորելու, դրանցից նոր որակ ստանալու, նոր կառույց արարելու կարողությունը:

Գլուխ 1.2 Խոսքի զարգացումը և ուսուցման միջոցները

Մայրենի լեզվի դասաժամերին ևս լուծվում են տարրական դպրոցի համար խիստ ընդհանրական խնդիրներ, որոնցից են ուշադրության եւ հիշողության, մտածողության եւ կապակցված խոսքի միաժամանակյա, անընդհատ եւ ներդաշնակ զարգացումը: Կանոնավոր ձեւավորված եւ զարգացած խոսքը նախ երեխային ճիշտ հասկանալու եւ ըստ այդմ նրա հետ աշխատելու հնարավորություն է ընձեռում, ապա երեխային օգնում է ճիշտ հասկանալու ուսուցման գործընթացում իրեն տրված հրահանգները եւ համապատասխան գործողություններ կատարելու, այսինքնք ապահովում է կրտսեր դպրոցականի ուսումնառության ողջ գործընթացը, երրորդ ամուր հիմք է դառնում միջին դպրոցում աշակերտի հետագա ուսումնառությունը կազմակերպելու համար:

Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի դասաժամերին տրվող լեզվական առաջադրանքներրը պետք է նպաստեն երեխայի ուշադրության, հիշողության, մտածողության տարբեր որակների եւ խոսքի զարգացմանը[9]:

> Ուշադրության զարգացում

Կրտսեր պրոցականի ուշադրությունը մարզելու համար տրվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք կենտրոնացում են պահանջում: Ասենք տրվում է որեւէ նկար ցանկացած թեմայի շուրջ, սովորողը պիտի նայի, ընկալի եւ պատմի դրա բովանդակությունը: Ուշադրության զարգացման համար առաջարկում ենք հետեւայլ վարժությունները՝

- Տառերի վերհիշում եւ ամրապնդում, օրինակ վերցնել մի հին թերթ կամ տպագիր նյութ եւ առաջարկել, որ երեխան ընդգծի կամ շրջանակի մեջ վերցնի բոլոր օրիան Ա տառերը:

[9] Թ.Ալեքսանյան, Լեզվի ուսուցումը միջին դպրոցում, Էդիտ Պրինտ, Երեւան, 2012, էջ 115

- Պատմության հորինում ըստ պլանի, սկզբնական շրջանում ուսուցիչը կազմում է պլան, ապա հաձնարարում, որ աշակերտները պատմեն կարդացածը կամ լսածը ըստ պլանի:
- Ուսուցիչը նախօրոք պատրաստում եւ աշակերտների համար կարդում է կիսատ նախադասություններ, երեխաներին առաջարկում, որ ավարտեն դրանք

Շատ կարեւոր է նաեւ աշակերտներին սովորեցնել համեմատելու իր արածը օրինակի հետ եւ գտնելու իր եւ ուրիշների սխալները:

> Հիշողության զարգացում

Խոսքի զարգացման հաջորդ տակտիկան հիշողության զարգացումն է: Պետք է ասել, որ կրտսեր դպրոցականի մտածողությունը դեռ մեխանիկական բնույթ է կրում: Մտապահման գործընթացն աստիճանաբար ձեռք է բերում պատկերավոր բնույթ: առաջարկում ենք՝

- Նյութի ուսումնասիրման ընթացքում նկարների, գծապատկերների, ազյուսակների ցուցադրումը: Այսպիսի համակցումները հատկապես օգտակար են տեսողական լավ հիշողությամբ օժտված երեխաների համար:
- Այնպիսի առաջադրանքների և վարժությունների հանձնարարում, աշակերտներին մղի իմաստավորված, գիտակցված մտապահման, այսինքն՝

  a) առարկաների, երեւույթների միջեւ գտնել եւ առանձնացնել որոշակի կապեր, համեմատել դրանք, գտնել նմանություններն ու տարբերությունները

  b) Որեւէ հիմական հատկանիշ հիմք ընդունելով՝ խմբավորել կամ ընդհանրացնել բառերը, հասկացությունները, ասենք՝ առարկա ցույց տվող, ծաղիկ նշանակող եւ այլն:

  c) Իմաստային, բառակազմական կամ այլ սկզբունքով խմբավորում կատարել

  d) Բառերի մեջ իմաստային եւ ձեւակազմական կապեր գտնել

Եվ ամենակարեւոր հանգամանքը թերեւս մտածողության եւ խոսքի զարգացումն է: Մտածողության զարգացման համար ներկայացնում ենք հետեւյաալ միջոցները՝

- Համեմատություն
- Դասակարգում
- Ավելորդի հայտանաբերում եւ առաձնացում
- Մասերից դեպի ամբողջական պատկեր

Դատողական բնույթի առաջադրանքներ՝ երբ ուսուցիչն առաջարկում է քննել լսածը կամ կարդացածը, կարծիք հայտնել դեպքերի եւ գործողությունների վերաբերյալ Մտածողության եւ խոսքի զարգացման համար շատ կարեւոր են կրտսեր դպրոցականի մատների նրբաշարժումների զարգացումը եւ մարզումը: Ուստի դպրոցականի սեղանին միշտ պետք է լինի նկարչական տետր, գունավոր մատիտիներ եւ թղթեր, մկրատ, քանոն եւ այլն:

Մտածողության եւ կապացված խոսքի ձեւավորման համար կարեւոր են երեխաների մտահորիզոնի ընդլայնումը եւ ճանաչողական գործունեության կազմակերպումը: Այս առումով նպաստավոր են կարդացածի շուրջ քննարկումները, մարդկանց, վերլուծություն, կարծիքների ստեղծագործության հերոսների վարքի տպավորությունների փոխանակումը եւ այլն:

Աշակերտների խոսքի զարգացումը, արտահայտելու ցանկությունը պիտի անընդմեջ խրախուսվի եւ ամեն երեխայի հնարավորություն տրվի խոսելու եւ արտայատվելու: Ուսուցիչը պետք է խուսափի մենախոսությունից, ողջ աշխատանքը կառուցի աշակերտի հետ երկխոսություն վարելու սկզունքով:

Խոսքի զարգացման համար առաջարկում ենք հետեւյալ հիմսաքարային վարժությունները՝

- Նմանության եւ տարբերության բացահայտում

- Նույն հատկանիշները ունեցող բառերի թվարկում- օրինակ առաջարկվում է թվել կլոր իրեր
- Ավելորդ բառի առաձնացում-օրինակ նույն արմատ ունեցող բառեր՝ մկնիկ, ձկնիկ, թռչնակ, այս օրիանակում թռչնակ բառը ավելորդ է
- Աշխատանք համանունների հետ
- Առած-ասացվածքների կազմում-

Թրի կտրածը կլավանա	և պահողը լեզուն է:
Աշխարհը շինողը	Լեզվի կտրածը չի լավանա:

- Տրված գոյականներով բանաստեղծական պատկերների հորինում
- Զուգորդությունների որոնում- օրինակ ասվում է ինքնաթիռ բառ, սրան կարող են զուգորդվել հնարավորինս մոտ այլ առարկաներ՝ թռչուն, թիթեռ (որպես թռչել կարողացողներ)
- Պատմության կրճատում
- Նախադասություններ պատահական 3 բառերով
- Շուտասելուկների, հանելուկների, ծիծաղաշարժ ոտանավորների ինքնուրույն հորինում

Բանավոր խոսքի դերն ու նշանակությունը առօրյա կյանքում բավականին մեծ է: Արտահայտիչ, պատկերավոր խոսքը անհամեմատ տպավորիչ է, ուժեղ, հարստացնում է խոսքի բովանդակությունը, զորացնում է արդյունավետությունը եւ ոչ միայն լսողի/լսարանի վրա ազդելու մեծ ներուժ ունի, այլեւ արթնացնում է նորանոր զգացումներ, խթանում է երեւակայությունը: Դրանով խոսքի առարկան լսարանի համար դառնում է առավել հետաքրքիր, իսկ հաղորդվող միտքը՝ ավելի ընկալելի[10]: Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ եւ հուզականությամբ ավելի բնական,

[10] http://ysu.am/files/06Y_Avetisyan-1431951000-.pdf, Յ. Ավետիսյան, Խոսքի արտահայտչականություն. Մեղմասություն եւ փոխարկում, էջ 67

կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է եւ չնայած ժամանակային եւ տարածական սահմանափակումներին, այսօր տեխնիկական միջոցները տալիս են հնարավորություն որոշ չափով հաղթահարել տարածական եւ ժամանակային սահմանափակումները։

Գլուխ 2 Հաղորդակցությունը եւ հաղորդակցական կարողությունների զարգացումը

Գլուխ 1.2 Հաղորդկացության դերը եւ տեսակները

Հասարակության եւ դրա մաս կազմող անհատների զարգացման պորցում հաղորդակցումը կարեւոր տեղ է գրավում: Այն անձի ձեւավորման եւ նրա վարքի դետերմինավորման կարեւոր պայմաններից է: Մարդկանց հասարակական կյանքը, նրանց համատեղ գործունեությունն անհնար է առանց հաղորդկացման: Միայն վերջինիս միջոցով կարող է իրականացվել առաձին առնահատների բազմակողմանի փոխազդեցությունը եւ փոխըմբռնումը: Հաղորդակցումը ամեն մի գործունեության անհրաժեշտ եւ էական հիմքն է: Նրա շնորհիվ մադիկ իրենց աշխանքում փոխըմբռնման, կազմակերպվածության, փոխանակում են աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ իրենց դիրքորոշումները եւ մոտեցումները:

Հաղարդկացությունը մարդկանց հաղորդակցությունների ձեւերից է, սոցիալ-հոգեբանական փոխազդեցության պրոցես, որի հետեւանքով իրականացվում սոցիալական փորձի փոխանակումը[11]:

Հաղորդակցությունը գործընթաց է, որի ընթացքում փո- խանցվում է տեղեկատվություն մի անձից (անձանցից) մյուս անձին (անձանց): Տեղեկատվությունը կարելի է փոխանցել տարբեր միջոցներով՝ բանավոր խոսք, բառեր), ոչ բանավոր (ժեստեր, դեմքի արտահայտություններ), նշաններ (մասնագիտական, համազգեստ, օր.՝ ուսադիրներ, գլխարկ) եւ այլն:[12]

Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով /ժեստեր/, դեմքի արտահայտություններով, խոսքով,

[11] http://lraber.asj-oa.am/5329/1/1985-3(36).pdf, Ա. Խաչատրյան, Հաղորդկացումը որպես անձի վարքի կարգավորման սոցիալական գործոն, էջ 36-37

[12] http://www.osce.org/hy/yerevan/120429?download=true, Ն. Մաթեւոսյանը,Հաղորդակցություն եւ բանակցություն, ԵԱՀԿ, 2014, էջ 7

մամուլի կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրություններով, հեռախոսով, ռադիոյով, հեռուստատեսությամբ եւ այլ եղանակներով։ Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ Հաղորդակցումը հասարակական տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների եւ գործունեության արդյունքների փոխանակում[13]։

Հաղորդակցման դասակարգումները շատ տարբեր են, ինչը պայմանա- վորված է դրա գործառույթների եւ ձեւերի բազմազանությամբ։ Ըստ սուբյեկտների ընդգրկման ծավալի հաղորդակցումը դասակարգվում է՝ [14]

- Միջանձնային-երկու անձանց միջեւ դեմ առ դեմ իրականացվող հա- ղորդակցում
- Խմբային- 3 անձից մինչեւ 20-30 անձանց միջեւ հաղորդակցում
- Զանգվածային –այս դեպքում ընդգրկված են մարդկանց մեծաթիվ խմբեր

Ըստ տեղեկատվության փոխանցման ձեւերի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

1. խոսքայինի, որի հիմնական միջոցներն են.

• բանավոր խոսք

• գրավոր խոսք

2. Ըստ հաղորդակցվող կողմերի պաշտոնական դիրքի առնչության հաղորդակցումը դասակարգվում է.

• Ուղղահայացի

• հորիզոնականի

[13] http://www.mkuzak.am/wp-content/uploads/HAXORDKAKCUTYUN-Uxix1.pdf, S. Խաչատրյան, Հաղորդակցման եւ աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Երեւան, 2012, էջ 8
[14] https://aniharutyunyan89.wordpress.com, Հաղորդակցման ձեւերը

3. ոչ խոսքային ժեստեր՝ ձեռքի, գլխի, մարմնի շարժումներ են (ֆրանսերեն՝ ժեստ-գործողություն)։ Որքան էլ տարբերվեն կուլտուրաները, ամենուր հուզվածության աճի հետ աճում է նաեւ ժեստիկուլյացիայի ինտենսիվությունը։ Ժեստերի մի մասի կոնկրետ իմաստը տարբեր կուլտուրաներում տարբեր է: Սակայն բոլոր կուլտուրաներում կան ժեստեր, որոնց նշանակությունը նույնն է[15]:

Հաղորդակցման գործընթացում շատ մեծ դերակատարություն ունի նաեւ մարդու տեսակը։ Զրուցակցի տեսակի ժամանակին բացահայտումը թույլ է տալիս հարմարեցնել նախադասությունները եւ բանակցություններում լրացուցիչ հնարավություն ունենալ հաջողության հասնելու համար:Հաղորդակցման գործընթացում արդյունքի տեսանկյունից շատ կարեւոր է նաեւ ինտոնացիան: Կարեւոր է այն, թե ինչպես է ասված, այլ ոչ թե ինչ է ասված։ Անգամ ամենաչեզոք խոսքը, եթե ասվում է թշնամական ինտոնացիայով, ընկալվում է որպես թշնամական խոսք։ Մարդիկ իրենք իրենց ինտոնացիան այս կամ այն կերպ չեն ընկալում, քանի որ այն ձեւավորվել է շատ վաղ եւ միայն դիմացինի ոչ վերբալ հաղորդակցումից կամ այլոց կարծիքից կարող է հասկանալ իր ինտոնացիան ինչպիսին է։ Կարեւորվում է նաեւ ճիշտ խոսքերի ընտրությունը՝ կախված իրավիճակից։ Եթե դիմացինը հուզված է, անհանգստացած, ապա պետք է ընտրել հնարավորինս չեզոք եւ «փափուկ» խոսքեր, որպեսզի խոսքերն այլ կերպ ընկելելու վտանգն անհետանա:

Գլուխ 2.1 Հաղորդակցական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում

Արդի պայմաններում կատարվող քաղաքական, տնտեսական եւ սոցիալական փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում կրթական

[15] http://www.mkuzak.am/wp-content/uploads/HAXORDKAKCUTYUN-UxIx1.pdf, S. Խաչատրյան, Հաղորդկացման եւ աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Երեւան, 2012, էջ 18

համակարգի եւ ծրագրերի վրա: Այդ է պատճառը, որ համակարգն ամբողջությամբ ընտրել է բարեփոխման եւ նորացման ուղին: Այսօր ժամանակակից գլոբալիզաղվող պայմաններում առաջնային է համարվում իրազեկության հասկացության ոչ միայն կիրառությունը, այլ նաեւ ռեալության պայմաններում դրա իրագործումը: Տարրական դասարաններում երեխային իրազեկվածության վակումի մեջ պահելու երեւույթը վերաբերում է երեխայի մոտ քննադատական մոտեցումը եւ մտածելու կարողությունը զարգացնելու գործընթացին: Այս նպատակներին հասնելու ուղիներից հասնելու ուղիներից է համագործակցային ուսուցումը, երբ սովորողները հանդես են գալիս որպես ուսումնական գործընթացի հավասարազոր գործընկերներ, ուղղակիորեն գործակցում են միմյանց հետ: Դա էլ նպաստում է ինտերակտիվ կարողությունների զարգացմանը եւ անձի ձեւավորմանը: Երեխաներին կարողություններով զինելու նպատակով պետք է նրանց դնել այնպիսի իրավիճակների հաղորդակցական մեջ, որոնք կմղեն կմտածեին, կգործեին իրական պայմաններում:

Լեզվին՝ որպես հաղորդկացական միջոցի, տիրապետումը պահանջում է հաշվի առնել նաեւ ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս եւ ինչո՞ւ հարցերը: Յուրաքանչյուր խոսքային իրադրությունում սովորողը խոսքային մտադրությունից ելնելով՝ փնտրում է դրանց համապատասխան լեզվական հատուկ միջոցներ: Ստացվում է հետեւյալ հաղորդակցական շղթան՝ (գծապատկեր 1)[16]



(գծապատկեր 1)

[16] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Վ.Մարտիրոսյան, Տիգրան Մեծ, Երեւան, 2003, էջ 17-18

Հաղորդակցական իրադրությունները, երբ սովորում ենք իրական կյանքից, իմաստ են հաղորդում ուսուցման գործընթացին եւ շարժում երեխաների հետաքրքրությունը, մի բան, որ միշտ չի ապահովվում մեր դպրոցներում: Այսպիսով, երեխաները կատարելով տարբեր գործողություններ՝ շփվում են միմյանց հետ եւ սովորում այն, ինչ անում են: Հաղորդակցական մեթոդների կիրառման շնորհիվ երեխաները կկարողանան այնուհետեւ իրենց գիտելիքներն ու հմտությունները կիրառել մեկ այլ համատեքստում՝ ուսուցումից դուրս այլ բնագավառում:

Աշխատանքի, առաջադրանքների կատարման ժամանակ նրանք մտքեր են փոխանակում, ներկայացնում իրենց գիտակցական վերաբերմունքը այս կամ այն հարցի նկատմամբ, բացատրում, վերաձեւակերպում մտքերը, լրացումներ անում, հաշվի նստում մյուսների կարծիքի հետ եւ դրանով իսկ զարգացնում ուսանելու իրենց ունակություններն ու կարողությունները: Համագործակցային ուսուցման ժամանակ ընկերը փորձում է օգնել ընկերոջը, որն ունի դրա կարիքը: Այդ կերպ նա սովորում է փոխանցել գիտելիքները: Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ երկխոսությունն ունի մեծ դեր: Երկխոսությունը, որի պարզ ձեւը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ: Մտածողության եւ մարդու մտային գործունեության զարգացման հետ փոխվում են երկխոսության դրսեւորման ձեւերը: Խոսքի տարբեր ոլորտներում կարող են կիրառվել երկխոսության յուրահատուկ դրսեւորումներ, որոնք ըստ էության տարբերվում են սովորական երկխոսություններից եւ առանձնանում են կառուցվածքային ու տրամաբանական հատկանիշներով: Հայտնի է, որ խոսքն ըստ գործածության բնույթի լինում է բուն կամ արտաքին, որով խոսողը իր միտ քն է հաղորդում ուրիշին, եւ ներքին, որը չի հաղորդվում լեզվի մտածական ներքին դրսեւորումն է: Խոսքի դրսեւորումներից է ներքին երկխոսությունը, այսինքն որեւէ մեկի զրույցն ինքն իր հետ[17]:

[17] http://kantegh.asj-oa.am/262/1/81-85.pdf, Ա. Գալստյան, Երկխոսության յուրահատուկ դրեւորումներներ, էջ 81

Այսպիսով, ուսուցման եւ ուսումնառության գործընթացում սովորողը կենտրոնական օղակն է դառնում, երբ ուսուցիչներն ըմբռնումով են մոտենում աշակերտներին եւ նրանց կարիքներին համակցելով անհատական, խմբային եւ ֆրոնտալ աշխատանքները։ Համագործակցային ուսուցումը զարգացնում է հաղորդակցվելու կարողությունը, եւ երեխաները միասին ավելի ստեղծագործաբար ու արդյունավետ են աշխատում, քան միայնակ։ Այսպիսով հաղորդակցական կարողությունների զարգացումը թերեւս կարեւորագույն խնդիրներից մեկն է, որը ծառացած է ուսուցչի առաջ՝ հիմքում ունենալով երեխայի խոսքի կարողությունների զարգացման եւ կայունացման եւ հաղորդակցական առաջնայնանությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցի հիմական նպատակը սովորողի մտավոր, հոգեւոր եւ ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի եւ աշխատանքային նախնական հմտությունների ձեւավորումն է: Տարրական դպրոցը թերեւս հանդիսանում է ուսումնառության այն օղակը, որը հիմք է երեխայի մոտ խոսքի մշակման եւ հաղորդակցման հմտությունների զարգացման համար: Հենց այս փուլում է, որ ուսուցիչը պետք է ներդնի իր բոլոր ջանքերը երեխայի մոտ լեզվամտածողության եւ գրագիտության զարգացման համար: Կատարված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ կանոնավոր ձեւավորված եւ զարգացած խոսքը նախ երեխային ճիշտ հասկանալու եւ ըստ այդմ նրա հետ աշխատելու հնավորություն է ընձեռում, ապա երեխային օգնում է ճիշտ հասկանալու ուսուցման գործընթացում իրեն տրված հրահանգները եւ համապատասխան գործողություններ կատարելու, այսինքն ապահովում է կրտսեր դպրոցականի ուսումնառության ողջ գործընթացը: Ինքնին համապատասխան մեխանիզմների, առաջադրանքների եւ վարժությունների կատարումը պետք է ունենա գեթ մեկ նպատակ՝ հասնելու երեխայի մոտ գրագետ, կապակցված խոսքի ձեւավորմանը: Ակնհայտ է, որ նախքան դպրոց գալը երեխան արդեն իսկ ունի որոշակի բառապաշար եւ պատկերացում իրերի վերաբերյալ, սակայն տարրական դասարաններում մայրենիի դասընթացներում, նպատակը ոչ միայն պատկերացում ունենալն է իրերի վերաբերյալ, այլ հասնել նրան, որ երեխան գտնի իրերի մեջ նմանություններ եւ տարբերություններ: Հասնել նրան, որ երեխան կարողանա զուգորդություններ անցկացնել, եւ ի վերջո երեխայի մոտ ստեղծագործական մոտեցում զարգացնել՝ ինքնուրույն պատմություն մշակելու միջոցով: Միայն համանման մեխանիզմների կիրառությունը հնարավորություն կտա հասնել ցանկալի արդյունքի: Այսպիսով, ուսուցման եւ ուսումնառության գործընթացում սովորողը կենտրոնական օղակն է դառնում, երբ ուսուցիչներն ըմբռնումով են մոտենում աշակերտներին եւ

նրանց կարիքներին՝ երեխային դարձնելով ոչ միայն դասի օբյեկտ, այլ նաեւ սյուբեկտ՝ մաքսիմանալացնելով երեխայի կարողությունների ռեալիզացիան:

Առաջարկում ենք՝

- կանոնավոր կերպով ձեւավորել եւ զարգացնել խոսքը
- երեխային օգնել ճիշտ հասկանալու ուսուցման գործընթացում իրեն տրված հրահանգները եւ համապատասխան գործողություններ կատարել
- հասնել երեխայի մոտ գրագետ, կապակցված խոսքի ձեւավորմանը:

Գրականության ցանկ

1. Ա. Գալստյան, Երկխոսության յուրահատուկ դրեւորումներներ

2. Ա. Խաչատրյան, Հաղորդկացումը որպես անձի վարքի կարգավորման սոցիալական գործոն

3. Ա. Հայրապետյան, Բառակերտությունը որպես լեզվի ստեղծագործական հատկանիշի իրացման միջոց

4. Ա. Տ. Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա

5. Թ. Ալեքսանյան, Լեզվաքաղաքական նյութի ուսուցումը որպես կապակցված խոսք զարգացման միջոց

6. Թ. Ալեքսանյան, Լեզվի ուսուցումը միջին դպրոցում

7. Յ. Ավետիսյան, Խոսքի արտահայտչականություն. Մեղմասություն եւ փոխարկում

8. Ն. Մաթեւոսյանը, Հաղորդակցություն եւ բանակցություն

9. Ռ. Խարազյան Մայրենի լեզվի ուսուցման պատմությունից

10. Վ.Մարտիրոսյան, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես,

11. Տ. Խաչատրյան, Հաղորդկացման եւ աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ